ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրին գնայ՝ տարեկան 4 դրամ արտաքին գաւառներուն համար։ Ինչպէս նաեւ Ամիրայութիւնը պիտի ունենայ մէկ հատուկ հաւատարիմ։ Խոսեալ տրիւն։

Հրատարակեալ է ամէն ըստ օր, փ. թիւրն։ Տարեկան գրաբերութիւնն է 6 ռուբլի։

2-ՐԴ ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. 1863 ԱՄԻ №33.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լեհայոց գործի այժեան վիճակը։

Լորդ Ռոսսէլի ծանուցագիրը, որնոր ուղարկուեալ է Անգղիայի դեսպան Լորդ Նեպիրին Պետերբուրգ, Լեհայոց գործի մասին։

Յուլիսի 30 (Օգոստոսի 11-ին) 1863։

«Այս տարուայ Յուլիսի 18-ին ստացայ իշխան Գարչակովի ծանուցագիրը, որնոր՝ մեր, Գաղղիայի և Աւստրիայի առաջարկութեանց անբաւարար պատասխանն էր պարունակում։

Ռուսաց կառավարութիւնը թէպէտ չէ խլում Եւրոպայի ու

Ռուսաց կայսրինէ թագուհին 1772 թուին խոստացաւ Լեհերին, որ նրանց կրօնին չէ դիպչելու բոլորովին: Ալէքսանդր Ա-ը 1815 թուին խոստացաւ Լեհերին տալ ազգային իրաւունք ու կառավարութիւն: Բայց էս խոստմունքները չը կատարուեցան: Երկար ժամանակ Լեհացւոց կրօնը շատ յարձակմունքներ կրեց և մինչև հիմի նրանք զուրկ են քաղաքական էն իրաւունքներից, որ տուած են նրան 1815 թուի դաշնագրի հիման վրայ: Ռուսաց կողմանէ էս պարտաւորութիւնների քակելը պատճառ դառաւ նրան չը սիրելունը և էս տարուայ Յունվարի դիշերներից մէկին Վարշավի աներումը յանկարծակի յարձակուիլը դատաւ հիմիկուան վրդովմանց պատճառ: Եթէ Լեհաստանի հասարակաց կարծիքը Ռուսաստանի հակառակ չըլներ, նրան հասցրած արտաքուստ բարոյական ու նիւթական օգնութիւնը ոչինչ նշանակութիւն չէր ունենայ յեղափոխականների համար: Զարդ է, Եւրոպայի բոլոր նշանաւոր տէրութիւններումը մեծ կարեկցութիւն ցոյց տուին դէպ ի Լեհացւոց գործքերը: Ռուսաստանն էլ պէտք է ուշադրութիւն դարձնէր էս համակրութեանը և էն դասից օգուտ քաղէր, որոնք պարունակումէ Եւրոպացւոց ցոյց տուած համակրութեան մէջ:

3.) Իշխան Գարչակովը յայտնումէ, որ յեղափոխականները իրը թէ ուրիշ ոչինչ չեն պահանջում, բայց միայն ազգային կառավարութիւն: Բայց կը սխալուէր նա, ովոր կարծէ, թէ Լեհերի հանդամանքներումը ժողովրդի մէջ միայն երկու կուսակիցներ կան, մէկ կողմը՝ տէրութիւնը, որնոր աշխատումէ ոչնչացնել ազգությունը, միւս կողմը՝ յեղափոխականների առաջնորդները, որոնք որ աշխատումեն ազգությունը սասկացնելու ու տարածելու համար: Էս երկու կուսակիցներից սաւահի ընտրումէ միշտ մէկ տեսակ ամ կուսակից բաղմութիւն, որոնց համար միևնոյն է, ինչոր ուզումէ ընի, միայն էն է նրանց պահանջածը, էն կառավարութիւնը կը համարեն անկողմնապահ ու բարի, որնոր նրանց կեանքն ու կայքը ապահով կը պահպանէ: Ռուսաց կառավարութիւնը չաշխատեց էս անկողմնակից բազմութեան սիրաը շահել, նրանց հաւատարմութիւնը չը ճանաչեց, բայց դժուար թէ էդ տեսակ ժողովուրդը յետոյ էլ անդործ մնայ ու չը միանայ գործողապատերազմող յեղափոխականների հետ: Անգղիայի թագուհին կրկին յայտնումէ Ռուսաց տէրութեանը շուտով հաշտուելու անպատճառ հարկաւորութիւն, որով որ միայն կ'ապահովուի բոլոր Եւրոպան: Եթէ Ռուսաց տէրութիւնն օգուտ քաղէր Աւստրիայի, Գազղիայի ու Անգղիայի կողմից առաջարկած արդար օգնականութիւնից, Ռուսաստանը կը գտնէր շատ միջոցներ, որոնցով էն անկուսակից ու խաղաղասէր ժողովրդի կարծիքները կը տարածուէին յիշեալ երկու կուսակիցների մէջն էլ ու էդպէսով մշտական խաղաղութիւն կը հաստատուէր էն երկրումը:

4) Վիեննայի դաշնագրի վրայ խօսելով Իշխան Գարչակովը ասումէ, որ նրա առաջին յօդուածը շարադրել է Ալէքսանդր Ա-ը: Էն առաջին յօդուածումը գրած է, թէ «Վարշավի թագաւորութիւնը, բացի միւս նրա մասի նահանգները, որոնց մասին ուրիշ կարգադրութիւններ է արած հետևեալ յօդուածներումը, անդարձ միաւորումէ Ռուսաստանի հետ, պահպանելով իրա ազգային կառավարութիւնը և կրօնի նա Ռուսաց ինքնակալները ու նրանց սերունդների իշխանութեան տակը յաւիտեանս յաւիտենից:

Եթէ էս յօդուածի մէջ ազգային կառավարութեան վրայ խօսք չըլներ, կը դրէին թէ «անդարձ կապուած կրնի» և չէին յիշի բոլորովին ազգային կառավարութիւն բառը: Ուրեմն պարզապէս երևումէ, որ Լեհաստանի Ռուսաստանի հետ միաւորող կապը նրանց ազգային կառավարութիւնն է էլել: Շատ հարկաւոր է գիտենալ, թէ ինչ տեսակ ազգային կառավարութիւն էր Լեհացւոց խոստացած կառավարութիւնը: Դրա պայմանները չը նշանակուեցան Վիեննայի դաշնագրի մէջ և ոչ էլ երեք տէրութիւնները գրեցին, այլ դրա շարադրելու իրաւունքը տուած էր Ալէքսանդր Ա-ին էն պայմանով, որ մէկ անգամ գրուի ու միշտ պահպանուի: Էստուր համար էլ Անգղիայի թագուհին իրա վեց յօդուածների երկրորդումը որոշ յայտնել է, պահանջել է Լեհաստանի համար էնպիսի ազգային կառավարութիւն, որ հաստատել է Ալէքսանդր Ա-ին իրա 1815 թուի նոյեմբերի 15-ի հրամանագրի մէջը:

5.) Իշխան Գարչակովը, վեց յ օդուածների վրայ դատողութիւններ անելով, ասումէ, որ երեք տէրութեանց առաջարկած միջոցները մասամբ ընդունել է Ռուսաց կառավարութիւնը, մասամբ էլ պատրաստումէ գործ դնել: Էս խօսքերիցն երևումէ, որ վերջապէս Ալէքսանդր Բ-ը հետևելու է միակերպ ինչպէս իրա սեփական համոզմանցը, էնպէս էլ Եւրոպայի տուած խորհուրդներին:

Պատերազմական գործողութեանց դադարեցնելու առաջարկութիւնը մերժել է Ռուսաստանը, պատճառ ունենալով խաղաղասէր Լեհերի առաւելութիւնն ու էդ ազգությունների կրած վնասները:

Չէ ընդունել նմանապէս Ռուսաստանը Վիեննայի դաշնագիրը ստորագրող տէրութեանց միջամտութիւնը և հաշտուելու ու խաղաղութիւն հաստատելու մասին էլ անհամաձայնութիւն է երևումէ Ռուսաց կողմանէ: Ռուսաց կառավարութիւնը մեր էս կերպի օրինաւոր առաջարկութիւններն ընդունելու փոխանակ,

ասում է, թէ Աւստրիան, Պրուսիան ու Ռուսաստանը, Վիեննայի դաշնագրի վրայ դատողութիւններ անելուց առաջ պէտք է միմեանց մէջը խօսակցին, համաձայնին ու յետոյ գործի հեռանքները յայտնեն Գաղղիային ու Անգղիային :

Այսպէս երկու զօրաւոր պատճառ, որոնցից ամէն մէկը կարող է մերժել էդ առաջարկութիւնը :

1) Վիեննայի դաշնագրի էն մասնաւոր կանոնների մէջ, որոնց վրայ խօսում է իշխան Գարչակովը, բոլորովին չէ յիշած որևիցէ քաղաքական հարցին վերաբերեալ բան, գրած է նրանց մէջը միայն Ռուսաց ու Լեհերի մէջ եղած առևտրական գործքերի մասին :

2) Յայտնի բան է, որ Աւստրիան էդ գործքերի մէջ էդպիսի միջամտութիւն ընդունելով, կըփոխէր Գաղղիայի ու Անգղիայի հետ ունեցած իրա յարաբերութիւնը :

Հէնց էստեղ համար էր, որ Աւստրիայի ինքնակալը մերժեց բոլորովին Ռուսաց էս առաջարկութիւնը:

Էս ծանօթութիւնները յայտնելով իշխան Գարչակովին, Անգղիայի թագուհին կամենում է կատարել և իրա մեծ պարտաւորութիւնը : Խնդրում է նա, որ իշխան Գարչակովին արժանաւոր ուշադրութիւն դարձնէ էս հանգամանքներին ու հասկանայ էն պատասխանատուութիւնը, որին ենթարկւում է Ռուսաց կառավարութիւնը :

Անգղիան, Աւստրիան ու Գաղղիան ցոյց տուին Ռուսաստանին հիմիկուանից գործողութեանց դադարեցնելու անհրաժէշտ հարկաւորութիւնը, յայտնեցին նրանց էս իրանց կողմանէ էն միջոցները, որոնցով կարելի է հասնիլ էդ նպատակին :

Եթէ Ռուսաստանը բոլորը չի անի, ինչոր կախուած է իրանից էս երեք տէրութեանց դիտաւորութիւնները գլուխ բերելու մասին, եթէ Ռուսաց կառավարութիւնն էն ճանապարհով չի ընթանայ, որ նրան ցոյց տուին բարեկամաբար, էն ժամանակը նա պատասխանատու կըդառնայ էն մեծ հետևանքների համար, որ կունենայ Լեհաստանի մէջ վրդովմանց շարունակուիլը»:

Գաղղիացւոց կողմանէ Դրուէն դէ Լուին էս տարուան 22-ին (Օգոստոսի 3-ին) և Աւստրիացւոց կողմանէ կոմս Ռէհբէրգը Յուլիսի 31-ին (Օգոստոսի 12-ին) ուղարկել են իրանց ծանուցագրերը պետերբուրգ իւրաքանչիւրն իրանց տէրութեան դեսպանների մօտ, միևնոյն գործքի մասին, որնոր յիշուած է Ռոսսէլի ծանուցագրի մէջ : Մեր լրագրի փոքրկութեան պատճառով չըկարողացանք լրիւ հաղորդել մեր ընթերցողաց, Անգղիացւոց ծանուցագրի պէս, Աւստրիայի ու Գաղղիայի ծանուցագրերն էլ առանձին առանձին: Ռոսսէլի գրութիւնն աւելի մանրամասն է և ապացոյցներով հաստատած, քան թէ Դրուէն դէ Լուի կամ կոմս Ռէհբէրգի ծանուցագրերը : Էս կարելի է ասել միայն էս երեք ծանուցագրերի մասին, որ սրանք բոլորն էլ մէկ ոգւով են գրած, տեղ տեղ մինչև անգամ ոճն ու բառերն էլ են միմեանց նման : Երեքի վերջաբաններն էլ միատեսակ են :

Այսպէս ինչպէս է խօսում Անգղիայի «Times» լրագիրը Լեհայոց գործքի վրայ : «Յեղափոխականները քիչ քիչ վարժւում են իրանց գործքերն տալի յառաջադիմութեամբ առաջ տանելու համար : Թէպէտ նրանցից շատերը կոտորուեցան, բայց կենդանի մնացածներն աւելի ավիանդաւոր թշնամի են դառնում Ռուսաց համար : Հնդուք որ սրանք տանում են իրանց հեղափոխութիւնը և էն Լեհրին, որոնք առաջ խաղաղ կեանք էին վարում : Մէկ քա իրանց յեղափոխականներն իրանց համար առանձին առանձին կառավարութիւններ ունին հաստատած և գեղցիքն օգնում են յեղափոխականների առաջնորդներին : Բանն էն է, որ էս բոլորն ընում է ամառը, երբ որ կարելի է բացօդեայ մնալ դաշտերումն ու անտառներումը, բայց երբ որ անցնի ամառուանից աւելի սառուկ ձմեռ կանգնի էս տարի, էնժամանակը բոլորովին ի փոխուի գործքի ընթացքը: Լեհացւոց ազգասէրների համար աւելի ջրդուր գալու բան է ձիւնը, քան թէ արևմտեան Եւրոպայի առաջարկած վեց յօդուածները : Եթէ պատերազմող Լեհերը ստիպուին թողնել իրանց անտառներն ու բաց տեղերումը գուրս գան կռուելու, յայտնի բան է, որ կըջնջուեան Ռուսաց զօրքի գործողութիւններով : Ամէնքի համար պարզ է նմանապէս և էն բանը, որ Ռուսների մեծ յոյսը ձմեռն է, էդ ժամանակը կարծում են դրանք ջնջել այժմեան վրդովմանց պատճառ դառնող Լեհերին:

Զմեռը մոտիկ է և եթէ Նապոլեոն Գ-ը կամենում է օրինաւոր օգնել Լեհացւոց, պէտք է շտապի, պէտք է սկսէ գործը քանի որ ցուրտը չէ վրայ հասել : Ճշմարիտ բան է. Լեհացիքը այլազգեաց օգնութեանն են սպասում, իրանց իրանց չեն կարող ազատութիւն ձարել : Լեհացիքը լաւ գիտեն, որ Ռուսները խստաջարգելու են նրանց, էստուր համար էլ շարունակում են աղմուկն էն դիտաւորութիւնով, որ երկարի ժամանակն ու գուցէ թէ մէկ ժամանակ դնան այլազգիքը նրանցն օգնելու : Նրանց գլխաւոր նպատակը Եւրոպացւոց մէջ համակրութիւն զարթացնելն է, էստուր համար էլ իրանց լրագրներումը մեծացնում են իրանց արած գործքերը : Նրանք լաւ գիտեն, թէ ինչպէս պէտք է ներգործել Եւրոպացւոց վրայ, գիտեն քանի արիւնհեղութիւնը սաստիկ ըլնի աղմուկների ժամանակը, էնքան սաստիկ կը տպաւորուի Եւրոպացւոց մտքումը և աւելի համակրութիւն կըզդալ տայ նը-

բանց դէպի յեղափոխականները: Սատիկ բան է տեսնել մէկ երկիր, ոյի արժանաւոր որդիքը Լեհացւոց պէս նահատակւում ըլնին: Բայց դժուարն էն է, որ արևմտեան Եւրոպան չէ կարող կատարել Լեհացւոց պահանջմունքները:

Եթէ Լեհացւոց ազատութիւնը գրուի գայ և մէկ առանձին Լեհաց տէրութիւն կազմուի Ռուսաստանի սահմաններումը, էդ աւելի վատ կըլնի, աւելի շարունակ կրկնառնակէ էդ նոր թագաւորութիւնն ամբողջ Եւրոպան էնդուր համար, որ Լեհացւոց և Ռուսաց մէջ անդադար չփթներ են ծագելու էն ժամանակն էս առաւել: Լեհաստանը Եւրոպայի մարմնու հիւանդ անդամն է: Բայց բոլորովին անկարելի է էնպէս բժշկել էդ հիւանդութիւնը, որ աւելի սատիկ հիւանդութիւն չառաջացնել նրա մէջ: Ամէնքը փափեռում մօտ կենալ էն վերքին և ոչ մէկը չէ համարձակւում փորձել նրա բժշկելը: Բայց կայ մէկ բժիշկ, որնոր պատրաստ է բժշկել Եւրոպան, դուրս կարելով նրանից ցաւաղար անդամը: Եթէ թողնենք մենք, որ Ռուսն էնպէս ներգործէ, ինչպէս իրա կամքն է, Լեհաց խնդիրը շատ շուտ կրվերջանար էդ ապրի բնաջնջ ըլնելով:

Բայց բանն էն է, որ էս կերպի բժշկականութեանն ընդդէմ են բոլոր միւս բժշկները: Անգղիան, Գաղղիան ու Աւստրիան սպառնում են էն բժշկին, որնոր ջնայելով նրանց արարմունքին շարունակում է գործ ածել դանակը Լեհացւոց դէմ: Մենք մեր կողմանէ յայտնեցինք, որ կըգործ դնենք ամէն միջոցները Ռուսաստանին հարկադրելու, որ Լեհացւոց հետ արդարութեամբ վարուի նա: Բայց մեր կառավարութեան զբաղմունքները միևնոյն ժամանակը հրատարակեցին, որ ոչ մէկ ժամանակ նրանք չեն թոյլ տայ Անգղեայի Լեհաց պատճառով անօգուտ և աննպատակ պատերազմ սկսել: Յուսով ենք մենք, որ միւս տէրութիւններն էլ միևնոյն բանը կանեն: Աւելի մեծ անիրաւութիւն է էնպէս անօգուտ սպասեցնել տալ Լեհացւոց, քան թէ յայտնել թէ Ռուսաստանն է յանձնում էս գործն էնպէս վերջացնել, ինչպէս ինքը գիտէ: Լապիսի յայտարարութիւնն իսկոյն կրկարէր Լեհացւոց յոյսը, կիմանային նրանք, որ էլ օգնող չունին արտաքուստ և Եվրէսով նրանց արիւնհեղութեան գլխաւոր առիթը կը ոչնչանար: Եթէ Եւրոպան մտադիր չէ գնալ պատերազմ Լեհաստանը վերականգնելու համար, ապա ուրեմն աւելի լաւ բան կանէ նա, որ շուտով համոզէ Լեհերին, թէ իրանցից նրանք նիւթական օգնութիւն չեն ստանալու բոլորովին:

«Կրեսոֆայա» լրագրումը գրած է, թէ մինչև հիմի Լեհաստանի խռովարարութիւնները Ռուսաստանին մօտ 30 միլիոն մարդ նստեցան: Յայտնի բան է, արդարութիւնը կը պահանջէ, որ էս գումարը յեղափոխականներից առնուի սակաւ առ սակաւ հարկի պէս: Բայց որովհետև զեղայիքը համարեա թէ չէին խառնուում պատերազմող յեղափոխականների հետ, էստուր համար նրանք կազատուին էս տեսակ հարկից, Ռուսաց բոլոր ճնաւոր պէտք է լրացնեն կալուածատէրներն ու քաղաքացիքը:

«Times» լրագրի կրակով քաղաքի թղթակիցը գրում է, թէ այլազգիներից Լեհացւոց օգնողներն էլան վենգերները: Վենգերներից շատերն առաջին պատերազմող գինուորներն են Լեհաց զօրքերումը: Եստուր պատճառն էն է, որ Լեհացւոց էնպէս մտիկ ոչով չէ ճանաչում ինչպէս վենգերները:

«Gazeta Narodova» լրագրումը գրում են, որ Հիւսիսային Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքումն երկրորդ խորհրդարան է բացուել Լեհացւոց գործի մասին: Ահա ինչպիսի ապերասիր են զրել նրանք ու ուղարկել Միացեալ Նահանգների ջհուդներուս մօտ: «Լեհացի եղբայրնե՛ր, յիշեցէք մեր հայրենիքը, միտներդ բերէ՛ք մեր եղբայրներին, որոնք պատերազմում են Լեհաստանում. յիշեցէ՛ք մեր մայրերի, քոյրերի ու երեխանց ցոյց տուած անձնուիրացութիւնը, մի՛ մոռանաք մեր Լեհաստանը: Մեր եղբայրները խնդրում են մեզանից օգնութիւն, շտապենք, գնանք նրանց մօտ և ապացուցանենք, որ մենք սիրում ենք նրանց, իմաց անենք, որ մեր հայրենեաց ազատութիւնը մեզ համար էլ է ցանկալի: Մենք էլ հետևենք մեր եղբայրներին, (այսինքն էն ջհուդներին, որոնք որ կազմել են առաջին ժողովարանը Ամերիկայումը) որոնք ժողովել են արդէն հազարաւոր դոլարներ և ուղարկել են իրանց հայրենիքը: Մենք էլ, նրանց գործը մեզ համար հայելի շինենք, ժողովենք միանանք, խորհրդարաններ կազմենք, ցոյց տանք, որ մեր սրտերն էլ են զգում հայրենեաց սէրը:

Ֆրանկֆուրտի ժողովը:

Ֆրանկֆուրտի ժողովի մասին շատ քիչ բան է յայտնի էնդուր համար, որ Գերմանիացումն էլ շատ քիչ մարդ է յայտնի: Նոր հիմի Աւստրիան սկսեց տպագրել էդ ժողովի մասին մէկ քանի գիտելիքներ: Էս գրուածքներից երևում է, որ Աւստրիայի կայսերն է աշխատանքը Ֆրանկֆուրտի ժողովը հաստատելու համար: Առաջ—առաջ Աւստրիան առաջարկեց Գերմանիայի մանր տէրութեանցն էս ժողովի մասին: Գործն զարկ է տուած, սրանից յետոյ էլ անկարելի է, որ միևնոյն դրութեան մէջը մնայ Գերմանիան, ինչպէս առաջ էր: Ինչոր ուզում է խօսին Աւստրիայի թշնամիքը, էլի պարտաւորուած է Գերմանիան Աւստրիային շնորհակալութիւն անելու: Շնորհակալութիւն է անե-

լու Գերմանիան նմանապէս Բաղեմի դուքսին, որնոր մէկ քանի առաջարկու թիւններ է արել ժամանակիս պահանջմանց համեմատ։ Պրուսիայի մասին չէ կարելի մէկ պարզ բան ասել, թէ ինչ է անելու, ընդունելու է Աւստրիայի առաջարկութիւնը, թէ չէ։

Սկանդինաւիայի տէրութեանց դաշնակցութիւնը։

Սկանդինաւիայի թագաւորութիւնները, այսինքն Շվեցիան ու Նորվեգիան և Դանիան էս տարի Յուլիսի 22-ից սկսած խօսակցութիւն են բաց արել միմեանց միաւորուելու համար։ Բանը համարեա թէ գլուխ էկած պէս է։ Ընդէս որ շատերը կարծում են, թէ դաշնագիրն արդէն հաստատած է և շուտով կ'իմացուի Սկանդինաւիայի թագաւորութեանց դաշնակցութեան համբաւը։ Ի՞նչ հարկաւոր է էդ երկու թագաւորութեանց դաշնակութիւնը, ո՞ւմմէն են վախենում։ Ուրիշ ոչինչ պատճառ չէ երևում մէջ տեղը, բայց Ֆրանկֆուրտի ժողովի արարմունքները։ Գերմանիայից է վախենում Դանիան, էնդուր էլ դաշնակից բարեկամ է ճարել թշնամուն ընդդիմանալու համար։

Ֆինլեանդիայի ազգային խորհրդարանը։

Էս տարու Սեպտեմբերի 6-ին Ֆինլեանդիայում Ռուսաց կայսր Աղէքսանդր Բ-ը ազգային խորհրդարան հաստատեց ու բաց արաւ էլ։ Խորհրդարանի անդամները կընին ինչպէս աշխարհականներից, նմանապէս եկեղեցականներից, քաղաքացիներից ու գեղացիներից։ Էս խորհրդարանի գործը կընի քննել Ֆինլենդիայի վերաբերեալ բոլոր խնդիրները և առաջարկել Ռուսաց թագաւորին հաստատելու համար։

Ռուսաց զօրքի թիւը։

1862 թուի ցունվարի սկզբներումը Ռուսները 1,198,632 զինուոր ունէին։ Սրանցից 36,674 մարդ ասպիճանաւոր զինուորական էին։

Համբաւ Մակարիի տնավաճառից։

Էս տարի Մակարիի տօնավաճառումը բամպակը ծախուեցաւ փութը 13 մ. 35 կ.—14 մ., տորոնը՝ 5 մ. ու 25 կ., կարմիր ճիճուի (զըմրզ) փութը 40 մ.—50 մ.։ Կրեստանիկովի գործարանի ստէարինի մոմը ծախուեցաւ փութը 10 մ.—10 մ. 30 կ., Բենգալեան լեզակը ծախուեցաւ 95 մ.—116 մ. փութը, Եավայի լեզակը 115 մ.—130 մ.։

Ռուսաստանումը կարելի է շոգենաւով ճանապարհորդութիւն անել Պետերբուրգից դէպ ի Ղրիմ ու դէպի Կովկասեան երկիրը։ Պետերբուրգից մինչև Բաստով քաղաքը (որնոր Դոն գետի ափին է) մէկ ճանապարհ է։ Թէ Ղրիմ ու Կովկասի կողմերը գնացողների համար։ Պետերբուրգից մինչև Մոսկով կերթաք երկաթուղով (փոստայի գնացք)։ Առաջին կարգի գինն է 19 մանէթ, երկրորդինը՝ 13 մանէթ ու երրորդինը 10 մանէթ։

Մոսկովից կերթաք նմանապէս երկաթուղով Նիժնի—Նովգորոդ։ Գներն է, առաջին կարգինը՝ 12 մանէթ 50 կ., երկրորդ կարգինը 9 մ. 22 կ. ու երրորդինը 5 մ. 12 կ.

Յետոյ Նիժնի—Նովգորոդից կերթաք մինչև Յառիցին շոգենաւով Վոլգայի վրայ։ Էս ճանապարհորդութիւնը աւելում է 7-ն օր։ Գներն է՝ առաջինինը՝ 34 մ., երկրորդինը 22 մ. 10 կ. և երրորդինը՝ 11 մ. 65 կ.

Յառիցինից կերթաք յետոյ երկաթուղով Կալաչ։ Գներն է՝ առաջին կարգինը 2 մ. 19 կ., երկրորդ կարգինը 1 մ. 64 կ. ու երրորդ կարգինը 91 կ.

Կալաչից մինչև Բաստով կերթաք շոգենաւով։ Գներն է՝ առաջին կարգինը՝ 16 մ., երկրորդինը՝ 12 մ. ու երրորդինը 5 մ.

Բաստովից թէ կուզեք Ղրիմ գնալ կընաք շոգենաւն ու կերթաք Տագանրոգ։ Գներն է՝ առաջին կարգինը՝ 2 մ. 50 կ. և երրորդինը՝ 1 մ.

Տագանրոգից կերթաք Բերդեանսկ, էնտեղից կերչ, կերչից Թէոդոսիայ և էնտեղից էլ Եալտա։

Պետերբուրգից կարող եք գնալ Եալտա 15 օրումը։ Էս ճանապարհորդութիւնը կընաք ձեզ, թէ առաջին կարգումն էիք նստած՝ 115 մ. 99 կ., թէ երկրորդ կարգումն էիք՝ 80 մ. 96 կ. ու թէ երրորդ կարգումն էիք 40 մ. ու 18 կ.

Բաստովից երեք ճանապարհ կայ Կովկասի կողմերը գնացողի համար։ Առաջինը Բաստովից մինչև Պեատիգորսկ կարող եք գնալ կառքով (դիլիժանսով), ծածկոցի տակը նստին արժէ 27 մ., իսկ առանց ծածկոցի 16 մ.

Երկրորդ կարող եք ցառիցինից գնալ Հաշտարխան Վոլգայով, էնտեղից Կասպից ծովով Բաքու։

Եւ երրորդ կարող էք կերչից գնալ Սև ծովով Փոթի։

Տագանրոգից մինչև Փոթի առաջին կարգի տեղն արժէ 46 մ., երկրորդինը 36 մ. ու երրորդինը 11 մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԵՒ ՓԱՌԱՍԷՐ

ՀԱՅՐԵՆԱՍԻԱՑ բերնէն շատ անգամ լսուած է թէ «Այժմեան դարուս մէջ երանի Մուշեղ և Վարդան իշխաններ, Ղևոնդ երէցներ, հասարակութեան համար մեռնող և Հայաստանի փառք վաստակող անձինք կրկին անգամ հոգի առնելով կենդանանային»։ Մենք կ'կարծենք որ այժմ էս Մուշեղ և Վարդան իշխաններ,

զևոնդ երեցներ կան, գուցէ և շատեր կան :

Միջոց բեր որ տեսնես :

Այսպէս հայրենասէր ընթերցողք պիտի հաւատան յուսալով թէ ուրեմն մերձեցել ենք մեր դարկապի յառաջադիմութեան օրերուն, վասն զի ունինք Բ. դիտասի եկեղեցւոյ և ազգի համար մեռնող անձինք: Այո՛ Հայք յառաջադիմութեան պղտոտն շուտով կ՚անցն. երբ սրտերը իրարու ծանօթ լինին : Ցաւալի է որ մեր ազգայնոյ սրտերը տակաւին իրարու ծանօթ չեն : Եթէ մէկը հայրենասիրական հոգւով վառուած ձեռքը պարզէ Հայաստանի հնութիւնը կամ Հայերը մեռելութեան քէն զարթուցանելու, քնարը զարնել յանկարծ կասկածը իրանք կպնչարէ. մտածելով թէ գուցէ քնարի ձայնը շատերու ականջին անհասկանալի հեռաւոր և անսովոր թուի :

Եւ ահա այս սրտերի անծանօթութիւնն է որ ամէն յառաջադիմութեան քայլերը կ՚արգելէ. ուրեմն ազատենք որ Վարդանին պատկոյ Աստուածը նախ սրտերը միացնէ. և ապա անէ՝ ինչ որ կուզէ իր Հայաստանին:

Մեր միտքը այս դարուս մէջ գտնուած հայ Եկեղեցականաց և Իշխանաւորաց վերայ է. բայց մասնաւորապէս իշխանք պիտի լինին այստեղ մեր խորհելու կամ գրելու առարկայն :

Իշխանք իրենց ունեցած հարստութեամբ, և իշխանական ազդեցութեամբ թէ կը կամին և կ՚անեն հասարակաց բարիքը, ահա մեր Վարդաններ ու Մուշեղներն են նրանք :

Այսպիսի իշխանք ինչպէս ծանրագին ադամանդ մատանի իրենց մատը, կկրեն այն փառաւոր անուան հետնա և Հայրենասէր կոչումը՝ անմահ յիշատակաւ: Սրահակառակ ազգը իր փառաց զոհ անող իշխանը իրեն արժանի անուն և յիշատակ կընդունի : Հիմայ տեսնենք թէ ո՞րն է ընկերութեան օգտի համար աշխատող ու մտածողը և ո՞րն է իր անձին և իր փառքին համար միայն : Թող կարդան ողջամիտ ընթերցողք հետևեալ տրամախօսական ձևով գրուած յօդուածը, որով աշխատել ենք ցոյց տալ թէ Հայրենասէր իշխանը ինչ զգացմունք և ի՞նչ մտածմունք կունենայ իւր կոչման և հասարակաց բարեաց վերայ. ընդ հակառակն փառասէր իշխանը ինչ կմտածէ և ինչ կգործէ :

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՌ ՓԱՌԱՍԷՐՆ

Գիտե՞ս իշխանազուն բարեկամ մենք ամէն ժամանակ Աստուծոյ փառք տալով պարտաւոր ենք մտաներս բերել նրա մեղի արած անթիւ բարերարութիւններին, և եթէ միանգամ աչերս դարձնենք դէպի մեր եղբայրները, որոնք անտանելի աղքատութեամբ իրենց օրերը կանցնեն և իրենց անդին կեանքը թշուառութեամբ կմաշեն. ահա այն ժամանակ կճանաչենք մեր Արարչին անսահման բարիքները որ մենք կվայելենք: Եւ մի թէ Աստուած կարող չէ ամենքին էլ հարուստ մեծատուն անել. և ամենուն էլ հանդիստ և երջանիկ կեանք տալ. այս կարող է, բայց չուզի. չուզի մեր Աստուածասիրութեան և եղբայրասիրութեան սահմանը հասկնալու համար. և կամ ճիշտն ասելով, որպէս զի մենք մեր ապագայ և ներկայ մարդկային անհաստատ վիճակը մտածելով չհպարտանանք չքքանանք : Քանի որ սրանք մեր աչքի առջևն են. մենք չենք մոռանար աշխարհս ամէն փառքերուն անցաւոր ու աստիճանաբար լինելը : Այսօր մենք մեծատուն ենք, վաղը կլինինք չքաւոր աղքատ. այսօր մենք սանդուխին վերի դուռն ենք. վաղը կիջնենք ներքևի ծայրը և նոքա կելնեն վերև. այսօր սրանք մեզ կծառայեն և մենք իրենց ներքևը կիշխենք. վաղը փոխադարձաբար, նոքա մեզի կը լինին իշխան և տէր և մենք նոցա սպասաւոր ծառայ :

Ահա այսպէս մեր ամէն բարիքները, կեանքը, փառքերը ժամանակաւոր և անցաւոր է. ուրեմն ի՞նչպէս պէտք է շարժենք և ինչպէս պիտի փոխարինենք ժամանակաւորը յաւիտենականին հետ : Պէտք է որ մեր ձեռքից եկածին չափ աղքատներ խնամենք, նոցա թշուառ զաւակաց մատաց և կենաց հարստութեան և լուսաւորութեան հոգ տանենք, ուսումնարաններ կառուցանենք և հետևաբար աշխատենք մեր անունը անմահ անել անջինջ յիշատակներով. և մանաւանդ իշխանութեան և մեծութեան օրէնքնել միայն այս կը պահանջէ մեզանից : «Մինչեռ ժամանակս ի ձեռս է գործեսցուք զբարիս» :

ՓԱՌԱՍԷՐ

Ես ինքս էլ կցանկայի քեզ հետ այսպէս պատեհ ժամանակի սեսնուիլ. այո՛ ես էլ դատախազ եմ քեզ քո այդ մոլորական շարժմանդ համար, գու ի՞նչպէս Աստուծոյ կամքին դէմ կգործես՝ իրեն թշուառ ըստեղծած թողուցած մարդին երջանկացնելու կաշխատիս. Աստուած թէ որ նրանց սիրէր, ի հարկէ փոքր ինչ ապրուստ էլ նրանց կուտար, որ գոնէ որովայնները կերակրէին և մարմինները ծածկէին. աղքատութեան մէջ են ծնած. աղքատութեան մէջ պիտի մեռնին : Աստուծոյ երեսից ընկած, և մարդութեան կարգի մէջ անարգուած անձանց հետ յաճախ յարաբերութիւն ունենալուդ համար չէ՞ որ բարձր պատիւդ ամէն մեծամեծաց առջև պակասեցրիր և մինչև հողն հետ հաւասարուեցար : Այժմ ես կարեկից եմ քո գործած սխալմանց. թող տուր : Ո՞հ ի՞նչ թշուառ ժամանակի հասանք, ոչ մեծը իւր մեծութեան յարգը կճանաչէ

և ոչ փոքրը իւր մեծը։ Հոյակապ ուսումնարաններ շինելուդ (բերանս անգամ առաջ չերթար դորա անունը տալու)։ Նոյն դրամները ծալը նետէր։ և կամ ազգաց համար տուած ոգորմութիւնը լաւ էր խնջայքնելու և կենացդ ուրախութեան սէր վայելչութեան համար գործածէիր։ մեծամեծ բարեկամներ կ'ստանայիր և մեծ անուն։

Դու այդպիսով աւելի անարգա՛ք կվաստակես քան թէ փառք։ Սրիկայ ապայոց ենամք կ'տանես, որ կարդալ սրվին։ ի՞նչ է նպատակդ։ ազգիդ ներկայ անկանգնելի վիճակին և ապագայ սնոտի յոյսին համար իմաստուն մշակներ պիտի պատրաստես։ ա՛յ ոգորմելի անձ։ Այժմեան ուսումնականները, կամ ըստ սովորականին ասելով, լուսաւորեալները ազգի համար ինչ երջանկութեան օրեր պատրաստեցին, նոքա ևս այն պիտի անեն։ փոխանակ ազգին թշուառութեան միգարման տանելու։ մի այնպիսի սատակահար քամիքի բերան տուին, որ Ովկիանոսի ամէնի ալիքներից պաշարվող նաւի նման այս կողմ այն կողմ կատտանի։ և ահա քիչ է մնացել որ ժայռի զարկուելով խորտակուի։ և այսուհետև կարմներն անգամ չնշմարուիր։ Կուզե՞ս փառաւոր մնալ թէ աստ թէ հանդերձելումը, ընթացիր իմ ճանապարհովը։ Ես իմ ստացուածներս քեզ նման զուրտեղ չեմ վատնել։ որով միայն անձս կփառաւորեմ։ որ անձս էլ դիս փառաւորէ։ կշրջեմ հրապարակներու մէջ կապքով զարդով և երեք չորս սպասաւորով։ կբարևեմ հալիւ հարիւրից մէկին։ և էնպուր համար է։ որ երբ կառքիս ձայնը առնումեն բոլոր մարդիկ ոտքի կկանգնեն։ գօտի ածեալ պաշարվիմ։ կտեսնվիմ յաճախ մեծամեծ և արքայազուն անձանց հետ։ բղեշխներու և հիւպատոսներու հետ հագած զգեստներս էլ փառքիս համեմատեն։ Ես պատիւ էլ ունեցել եմ շատ անգամ արքայից հետ տեսնուիլ։ և սրանցմով կգուշակեմ, որ անշուշտ երկնքի թագաւորին հետ էլ տեսնուելու պատիւ պիտի ունենամ։ և շատ կարելի է որ խորհրդական անդամալ ընտրէ զիս։ էլ սրանից աւելի ի՞նչ փառք և ի՞նչ երջանկութիւն։

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Այդ հատներից կհետևի, որ դու աւելի յաճախ կարդացիս սատանայի աւետարանը՝ քան թէ Յիսուսինը։ որովհետև Յիսուսի աւետարանը շատ անգամ կարդանք, այդպէս անսխալ մարգարէութիւն մը տեսած չեմ։ այո՛ կայ այն անուտ վճիռը, որ կասէ «Եւ որ բարձր է առաջի մարդկան, պիղծ է առաջի Աստուծոյ»։ Եւ դու մի կարծեր թէ մարդս ծնած է մի միայն իր անձը իրրև Աստուած պաշտելու և պաշտել տալու համար, այլ դու ծնար անհրաժեշտ պարտքեր կատարելու։ • • • Հպատակ մնալ Արարչին, սիրել ընկերիդ և օգնել հայրենեաց։ այո՛ ամէն մարդ ամէն հայր, ամէն իշխան և ամէն առաջնորդ պարտաւոր են այս բանը կատարելու։ Աստուածասիրութեան, ընկերասիրութեան, հայրենասիրութեան և ամէն տեսակ առաքինութեան ձիրքերով կենդանի օրինակ լինել նախ իւր զաւակաց, ընտանեաց և մերձաւոր անձանց։ ապա բոլոր մարդկային ընկերութեանց և յետագայ սերնդոց։ այնպէս որ իր մեռնելուց յետոյ, իւր բարի յիշատակները կենդանի մնան յաւիտեան։ Մեր նախնի պատմութիւնները կը կարդա՞ս, գիտե՞ս այն Աստուածասէր և հայրենասէր ընտիր իշխանաց յիշատակները։ կամ Աստուածատեաց և հայրենատեացներու անունները։ Կտեսնե՞ս որ մինչև ցայսօր կտանէ և պիտի տանէ Հայաստանեայց եկեղեցին օրհնութեամբ իւր ընտրելագոյն նահատակաց անունը։ և նզովիւք կյիշէ չար վատակներու և ընդդիմադիրներու անունը։ Դու քո նուիրական պարտաւորութիւնները չճանաչելուց և չկատարելուց զատ, կատարողներուն էլ՝ անճոռնի փիլիսուփայութեամբ և անհոգի ու մռայլ ասուածարանութեամբ կմեղադրես։ փքով լցուած ուղեղդ իբրև Սողոմոնի իմաստութեան գանձարան կարծելով։ Ուսումնականաց օգտակար ձեռնարկութիւնը կվատաբանես։ զպրոց կառուցանելը ազգաթիկ մանկանց ուսման պատճառ լինելը ազգաթաց ոգորմութիւն տալը մոլորութիւն կհամարես։ այո՛ իրաւունքը քո՛ն է։ որովհետև չէ կարելի խաւարը լուսոյ հետ միաբանել բայց պիտե՞ս «Որ գնայ ի գեշերի գայթակղի։ իսկ որ գնայ ի լոյս ոչ գայթակղի»։ Նմանապէս լուսաւորեալները կուրօրէն չեն ընթանար որ խորխորատ ընկնեն։ նոքա ազգի օգտի համար կջանան։ կքրքջանեն, կոքնեն, և ոչ իբենց անձին։ վերջապէս կաշխատեն Աստուծոյ կամաց կարապետութիւն անել՝ ազգին ապագայն երջանկացնելու։ Աստուած էլ միշտ ձեռնտու և օգնական է այնպիսեաց։ Կերևի որ այդ բնութիւնը բնական է եղած ի մանկութենէ քեզ հետ մեծանալով։ Ինչպէս որ մի երջանկաբերի սովորութիւն կայ մեր Հայաստանեայց ժողովրդոց ընտրելագոյն մասին։ մէջ որ ամէն հայրեր իրենց զաւակները պզտիկուց զանազան տեսակ առաքինութեանց օրինակներով կկրթեն։ այո՛ այն Աստուածավախ աղքատասէր և հայրենասէր հայրը կըցանէ իւր որդւոյ սրտի և հոգւոյ անդաստանին մէջ առաքինութեան սերմերը ինչ որ ինքը կզործէ, ամէն առաւօտ և երեկոյ իւր նոր լեզու և նոր ոտք ելած որդւոյն ձեռքից բռնելով և ի միասին եկեղեցի տանելով Աստուածպաշտութիւն սէր և սերմ կտնկէ նրա մատաղ սրտին մէջ։ իւր հօր աղքատասիրութիւնը և հայրենասիրութիւնը տեսնելով բնական ունակութիւն կը

լենի իրեն, և իրեն հետ կաճին ու կզարգանան նոյն դանուած սերմերը: Որեմն այսպէս և քո հայրն է ունկել սրտիդ մէջ այդ փառասիրութեան անձնապաստանութեան չար սերմը, էլ հնար չիկայ խլելու. Նը-բա համար է որ երինքի փառքերը հանդերձ երկրաւորով քեզ կսպասկանես ուզած կանդունդի չափելով: Աւաղ յիմարութեանդ. չէ՞ չէ՞ շատ չաւիլ որ ամենուդ էլ Աստուծոյ հետ հաւասար դնես. բայց զլուխդ դալիք չարիքներն էլ դնա դու մոռանէ: Իսկ ես դարձեալ կկրկնեմ իմ խօսքերս. կուզես մարիկ արա, կուզես մի անիր: Ինքզինքդ այնչափ բարձրացրու, որչափ որ մարդկութեան սահմանը կներէ. ապա թէ ոչ, աարսափելի բարձրութիւնից վատնդաւոր անկումը կայ: Այն տեսակ գործքերու ձեռնամուխ եղիր, որոնք որ հասարակութեան օգտին և Հայրենեաց յառաջդիմութեան կվերաբերին. և այնպիսի բաներու համար վատնէ քո ստացուածներդ, որ կարողանաս հանդերձելումն էլ նորա առատ պտուղները վայելել: Քո այժմեան անցաւոր փառքերդ չեն որ քեզ պիտի արժանացնեն անանց փառաց. այլ այն գործերը, որոնք աստուածահաճոյ Հայրենեաց և հասարակութեան բարիք անելու համար են: Նրանցմով միայն կատարած կլինիս իշխան, քո պարտաւորութիւններդ. և նրանցմով կընդունի մարդ արժանաւոր իւր դլխին քաջին Վարդանայ լուսեղէն պսակը, ապա թէ ոչ Վասակայ հրեշտակները կպսակեն:

ՓԱՌԱՍԷՐ

Ես քեզ կուզէի հրաժարացնել այդ մոլար ճանապարհից, դու զլՈ՞ կհրաւիրես ի կորուստ. լաւ համոզուեցայ որ թշուառանալու խորխորատներ ձեռքովդ կը փորես: Այս կամաւ կկորանաս, նրա համար էլ չպիտի կարողանաս կանգնել: Քեզ նման բարեպաշտ և ջերմ ազգասէրներ շատ եմ տեսած. որ յիմարաբար ուներցած գոյքերնին վատնելով այժմ մէկ մէկ մուրացկան են դարձել. և մուրացկանութեան անդամ անձեռնհաս. վան դի կամաչեն:

Ես կՀանայի քեզ ինձ նմանացնել, բայց երբոր չեռլսեր. ընդ այիր ինչպէս որ կուզես. դուն էլ մէկ օր պարկ մը վեզդ անցուցած դառնէ դուռ պիտի ընկնես, և ոչ ոք քեզ օգնող կամ ձեռնկալու. մահն անդամ թշուառ կլինի քեզ համար. Ի՞նչ հաճոյ քո ողորմելի ընտանիքը:

Հա իմ բարեկամական խօսքերը, դու դիտես. «Որ ոչ կամեցաւ զօրհնութիւն հեռի եղիցի ի նմանէ»:

Ձեր հայրենասէր համարուած քաջ Վարդանը չէր, որ իր ուժին վեր գործի ձեռք զառնելով, Հայոց անմեղ և անհամար երիտասարդներու արիւնով ներկեալ սուսա Արտաղու դաշտը ու բոլոր Հայաստան աշխարհը գերել և եկեղեցիք այրել տալու պատճառ եղաւ:

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Այս հայրենեաց լուսաւորութեան և ազգիս բարեկեցութեան համար ես բոլոր գոյքս էլ կանքս էլ կզոհեմ, քաղցր է ինձ. սիրով յանձն կառնում աղքատութիւն, մուրացկանութիւն, անպատուութիւն և ամենատեսակ թշուառութիւն. և այս անելով ոչինչ բան արած չեմ լինիր տակաւին միայն թէ իմ կոչմանս պարաքը օրէնքն ես կկատարեմ մենք ամէնքս էլ հայրենիքով կապրինք. հայրենիքով մարդ ենք. և հայրենիքով հայ:

Հայաստան որ չլինի Հայ չլինիր, հայր որ չլինի զաւակ չլինիր. նոյնպէս հայրենիք որ չլինի ժառանգ չլինիր:

Խռովութիւն որ չլինի խաղաղութիւն չթագաւորեր. սառնաշունչ ձմեռ որ չլինի զուարթ գարուն չյաջորդեր. վերջապէս թշուառութիւն որ չքաշենք, երջանկութեան չենք հասնիր:

Վարդանայ տանջուած անտանելի դժոխքը ինձ համար ընտրելի է քան Վասակայ հանդիստ աքքայութիւնը:

Զեմ ընդունիր ցազկերտի շնորհած փառք պատիւ ու պարգևները, այլ կսիրեմ Վարդանին նահատակող սուրը:

Եթէ Հայոց անմեղ ու անհամար երիտասարդաց արիւնի չոռոգվէին Հայաստանի դաշտերը. ո՞ւր տեղէն պիտի բուսանէին Հայութեան ազնիւ բոյսերը. միշտ ցարդ պիտի մնար արդեօք Հայ անունը. թէ Վարդան չմեռնէր Հայրենեաց համար իւր ընկերակիցներով. դու հիմայ Պարսից տարուշանապետ էիր. ես քրմապետ. Կիրակոսը ցուլ պիտի պաշտէր. իսկ Թորոսը Ջուր:

Արդ իմացա՞ր որ նոցա մեռնելովը բոլոր Հայկայ դաւակներս կենդանացանք. մենք Հայրենիքով կենդանի ենք. Հայրենիքը մեզմով. Հայրենիքով միայն մարդ ենք. ուրեմն Հայրենեաց պարաքը ունինք. աշխատանք. Հայրենեաց համար աքնինք. Հայրենեաց համար նա և մեռնինք

Հա իմ վերջին խօսքը:

Սասածներս համոզուեցա՞ր թէ կորուեցար:

Եղնիկ Վարդապետ Սերաստացի
ի Նոր Ժառանգաւոր ուխտէն
Վարագայ:

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. Ս ԵԼԲՈՒՄԵԱՆ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ (Հ. ԷՆՖԻՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 28 сентября 1863 г.
ТИФЛИСЪ.